



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ  
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 6**

«17» հուլիսի 2023թվականի գ. Տեղ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

**ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝**

Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Աստղիկ Ղարազյոզյանը

**ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝**

**Տեղ համայնքի ավագանու թվով 8(ութ) անդամներ՝**

1. Ղուլունց Դավիթ Արամայիսի
2. Միրզոյան Արամ Գագիկի
3. Միքայելյան Աննա Միքայելի
4. Սիմոնյան Լորա Ռաֆիկի
5. Առաքելյան Վահե Վարդանի
6. Բաղդասարյան Նազիկ Մարատի
7. Դանիելյան Սևադավիտայիկի
8. Դալլաքյան Արման Յուրիկի

**Բացակայում են Տեղ համայնքի ավագանու թվով 7(յոթ) անդամներ՝ Կարեն Բաղդասարյանը, Արզամ Հովսեփյանը, Հայրապետ Հայրապետյանը, Մասիս Զեյնալյան, Արագած Ղուկասյանը, Գևորգ Մարտիրոսյանը և Ասպետ Գալստյանը,** որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար՝ Աստղիկ Ղարազյոզյանը, ով միաժամանակ հայտարարեց, որ նիստին մասնակցում են ավագանու **թվով 8 (ութ) անդամները:**

**ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝**

Համայնքի ղեկավարի խորհրդական Մարտունիկ Պողոսյանը, Տեղ համայնքի անասնաբույժ Արագած Ղուլունցը, Արավուսի վարչական ղեկավար Արթուր Զհանգիրյանը, ՀՈԱԿ-ի ժամանակավոր պաշտոնակատար՝ Արտուր Գրիգորյան, Տեղ համայնքի աշխատակազմի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

**ԼՍԵՑԻՆ.**

**1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի ԱՐՏԱՀԵՐԹ  
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Ձեկուցող՝ Դ. Ղուլունց)**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 17-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2023թվականի բյուջեի կատարման երկրորդ եռամսյակի ընթացքի մասին:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 23-ի N 57-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու մասին

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 8**

**դեմ - 0**

**ձեռնպահ - 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ  
2023ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ  
ՄԱՍԻՆ**

**(Ձեկուցող՝ Ա. Ղարազյոզյան)**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթներով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետով, համայնքի ավագանին **որոշում է.**



Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի բյուջեի 2023 թվականի կատարման երկրորդ եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-6 հատվածների:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 8**

**դեմ - 0**

**ձեռնպահ - 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 57-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Ա. Ղարազյոզյան)**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ կետով. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 57-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

- 1) Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 240451,2 հազ. դրամ» բառերը փոխարինել «եկամուտների գծով՝ 437373,9 հազ. դրամ» բառերով:
- 2) Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 297319,7 հազ. դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 494242,4 հազ. դրամ» բառերով:
- 3) «հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ 56868,5 հազ. դրամ»:
- 4) Որոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի նախատեսված հատվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 8**

**դեմ - 0**

**ձեռնպահ - 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**